Բողոքում են որոշման դեմ. շրջափակումը շարունակվում է

ՀՈՒՍԱԽԱԲՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ամեն մի հայ, զայրույթով կարդացի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրավիճակը նորմալացնելու միջոցառումների մասին» օրապակաս որոշումը, որի վերնագիրը բոլորովին չի համապատասխանում նրա էությանը և որը հարցերի լուծման դեմոկրատական եղանակի ծաղրապատկերն է: Ում էր պետք այս հերքական ներկայացումը, որն անց է կացված անցյալ տարվա հուլիսի 18-ի սցենարով: Եվ միթե դրա համար երկու տարի էր պետք:

Անկեղծ ասած, մենք ավելին չէինք սպասում, թեև չէինք կորցրնում հույսի վերջին նշույլները, մտածելով, որ կենտրոնական իշխանությունները, այնուամենայնիվ, գուցե նվազագույն ողջախոհություն և օբյեկտիվություն ցուցաբերեն հարցի արդարացի լուծման նկատմամբ: Չեինք սպասում, որովհետև միշտ հայտարարվում էր, որ Ադրբեջանի տարածքի վերածնվում չի լինելու, այդպես էլ մինչև վերջ չհասկանալով կամ, համենայնդեպս, այդպես ձևացնելով, ազգային ինքնորոշման հիմնահարցի և տարածքների վերածնման սկզբունքային տարբերությունը: Սակայն անսպասելի էր նաև, որ կարող են այսքան կոպիտ ու բիրտ ձևով խախտել դեմոկրատիայի ամենատարրական կանոնները:

Նուտով կլրանա արցախյան շարժման երկու տարին: Այն, ինչ կուտակված էր ժողովրդի սրտում 70 տարվա ընթացքում, ինչը միշտ մտահոգել ու անհանգստացրել էր հայ ազգին, բայց հասկանալի պատճառներով բացահայտ չէր ասվել, այդ երկու տարվա ընթացքում հարյուրի նման դուրս ժայթքեց: Մեր դյուրահավատ ու ազնիվ ժողովուրդը, ոգ իր բազմադարյան պատմության մեջ քիչ չի խաբվել, այս անգամ էլ միամտորեն հավատաց վերակառուցմանը և կարծեց, թե գոնե հիմա վերջապես արդարությունը հաղթանակ պաշտպանություն կգտնի և կհաղթի: Բայց ավաղ: Վերակառուցումը ազգային հարցում առայժմ միայն դատարկ խոսք է, առանց իրական բովանդակության:

Մարդիկ նյարդային և հոգեկան լարվածության բարձրակետին հասան: Թվում էր, թե զոնե քաղաքական բնագավառում, անցյալի դառն ու այլանկակ փորձից ելնելով, կարելի էր շտկել տտալինյան ժամանակաշրջանում թույլ տրված ակնհայտ անարդարությունները, վերականգնել պատմական ճշմարտությունը: Այս էլ չեղավ: Ինչպես երևում է, ներկա քաղաքական համակարգում, երբ դեռ շափազանց ուժեղ է հին մեթոդների ազդեցությունը, երբ բարձր իշխանավորները, չնայած նրանց երեսպաշտական հավաստիացումներին, դեռ լիովին չեն ձերբազատվել ժառանգություն ստացած մաշված ու ամբողջ աշխարհում իրեն վարկաբեկած քաղաքականությունից, հնարավոր չէ վերականգնել արդարությունը: Հետաքրքիր է, ինչպես պետք է պետությունը կառավարի իր ժողովրդին, եթե նրա բարձրագիր օրգանի քայլերը վստահություն չեն ներշնչում:

Հիրավի շատ դժվար է հավատալ, որ 70 տարվա ընթացքում Արցախի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների ցուցաբերած խայտառակ խտրականությունից, այս երկու տարվա բուռն իրադարձություններից, Սումգայիթի, Կիրովաբադի և այլ տեղերի ոճրագործություններից, բազմաթիվ ու բազմապիսի համոզիչ փաստարկումներից հետո անգամ, երբ արդեն հիշ թե շատ բանականություն ունեցող ամեն մի մարդու համար պարզ է, որ հին վիճակն անհնարին է շարունակել, որ արցախյան շարժումը մի խումբ ծայրահեղականների գործը չէ, այլ ամբողջ հայ ժողովրդի պահանջն է, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը կհաջողվեր իր «ագրեսիվ - հնազանդ» մեծամասնության մեքենան գործի դնելով, հայ դեպուտատների բացակայությամբ անցկացնել փակ դռների հետևում նախապատրաստած այդ օրապակաս որոշումը, այն բազմաթիվ որոշումներից մեկը, որ մնացել են ու կրմնան լոկ թղթի վրա: Խորհրդային իշխանությունների համար մշտակայուն սովորություն է դարձել դեռ մի սխալը շուղղված, մյուսը թույլ տալ:

Ինչո՞վ է տարբերվում այս որոշումը 1921 թ. տխրահռչակ որոշումից: Գրեթե ոչնչով: Այն ժամանակ ընդունվեց թուրքական զավթիչների ճնշման տակ, հիմա՝ Ադրբեջանի «ժողովրդական ճակատի» ավազակների ճնշման տակ:

Ո՞ւր մնաց «ազատ» երկրի դեմոկրատիան: Ինչ բարոյական իրավունք ունեն վերին իշխանությունները ու դեմոկրատի պատմուճանով բյուրոկրատ-աստիճանավորները հորջորջելու ընդհանրապես դեմոկրատիայի մասին, ճնշաղատելու ուրիշ երկրներում դեմոկրատիայի խախտումները, երբ իրենց սեփական երկրում դեմոկրատիան ոտնահարվում է անաստված ձևով, բռնապետական մեթոդներով:

Ո՞ւր մնաց «աշխարհի ամենադեմոկրատական» սահմանադրությունը, որն առանց այն էլ լեցուն է հակասություններով: Ո՞ւր մնացին լենինյան ազգային քաղաքականությունը, ազգերի ինքնորոշման իրավունքն ու իրավահավասարությունը, որոնց մասին կեղծ բարեպաշտությամբ այդքան շատ են բարբառում հենց այդ սկզբունքները ոտնահարողները:

«Երաշխավորել (և ոչ թե հանձնարարել) Ադրբեջանի Գերագույն խորհրդին կարճ ժամկետում ընդունել Լեռնային Ղարաբաղի իրական ինքնավարության կարգավիճակի բարձրացումն ապահովող օրենսդրական միջոցառումներ»,— գրված է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշման մեջ: Պատկերացրեք ինչ պարադոքս է՝ զոհին հանձնել գայլի դատին:

Մի՞թե որոշման օգտին քվեարկող ժողովրդական դեպուտատները այնքան միամիտ են և գործից անտեղյակ, որ կարծում են, թե Ադրբեջանը լրջորեն միջոցառումներ կմշակի և արցախցիներն էլ դրանք կընդունեն: Միթե վերին իշխանությունները այդպես էլ չհասկացան, թե ինչ է պահանջում Արցախի ժողովուրդը: Չհասկանալը երկու պատճառ կարող է ունենալ. կամ անգիտությունը, կամ կանխամտածված կերպով իրենց շրհասկացողի տեղ դնելը: Երկուսն էլ աններելի են, և հենց դրանք են, որ հասցրին ողբերգական իրադարձությունների և աղետաբերության:

Քանի-քանի նմանատիպ որոշումներ են եղել: Ո՞րն է կատարվել: Ոչ մեկը: Չխոսելով նախորդ 65 տարիների մասին, նշենք միայն վերջին երկու տարվա ընթացքում ընդունված որոշումները: Անցյալ տարի որոշում ընդունվեց Լեռնային Ղարաբաղի տնտեսական զարգացման վերաբերյալ, հատկացվեց 400 մլն.: Կատարվե՞ց այդ որոշումը: Իհարկե՝ ոչ: Ընդհակառակը, հատկացված գումարներն օգտագործվեցին ի վնաս Ղարաբաղի հայ բնակչության: Եվ ո՞վ պատասխանատվության կանչվեց դրա համար: Ոչ ոք: Ստեղծվեց հատուկ կառավարման կոմիտեն: Ինչ արվեց: Ոչինչ, վիճակն ավելի բարդացավ, ադրբեջանցիներն արեցին, ինչ կամենում էին: Հետո երկար ժամանակ զգաստային շրջափակման են ենթարկել Արցախն ու Հայաստանը, զբաղվում են վանդալիզմով, չարդուփշուր են անում գնացքներ, թալանում ապրանքները: Վեգիրովը երեսպաշտությամբ ու դերասանական էժան շարժումներով հանդես եկավ հեռուստատեսությամբ՝ խեղաթյուրելով փաստերը և խոստումներ տալով: Նոր որոշում ընդունվեց: Ո՞վ կատարեց այդ որոշումը: Ո՞վ պատիժ կրեց շրջափակման համար, որ մինչև այսօր էլ շարունակվում է: Եթե Ադրբեջանը անպատիժ կերպով չի կատարել մինչև հիմա եղած որոշումները, մենք համոզված ենք, որ չի կատարի նաև այս կիսատպռատ որոշումը, որ մեղմիկ երաշխավորություններ է տալիս նրան: Դա մի փաստաթուղթ է, որ պարզապես հայ ժողովրդին կանգնեցնում է մի անելանելի վիճակի առջև:

Հիմա արդեն կենտրոնական իշխանությունները վերջնականապես ղեն զցեցին քողը և ցույց տվեցին իրենց իսկական դիրքորոշումը՝ սիրախաղ անել ադրբեջանական վանդալների հետ և արհամարհել հայ ժողովրդի արդարացի պահանջները: Անսքող արհամարհանք չէ՞ արդյոք, որ նույնիսկ հայ դեպուտատներին ոչ միայն նախապես չեն ծանոթացնում որոշման նախագծին, այլև չեն ուզում ելույթի համար ձայն տալ: Իսկ ադրբեջանցիների համար կանաչ ճանապարհ են բացում: Ի դեպ, չի կարելի հպարտության զգացումով չնշել, որ նիստին մասնակցած մեր ժողովրդական դեպուտատները և հանրապետության ղեկավարները միասնաբար գրավում են մարտական ու անզիջում դիրք և դիմում են հիշտ քայլի, բողնելով դիքլինը:

Ի՞նչն է այս ադրբեջանամետ քաղաքականության պատճառը: Գուցե ա՞յն, որ Հայաստանն իր աշխարհագրական դիրքի հետևանքով չունի մի այնպիսի հավատարիմ հարևան, ինչպես Թուրքիան Ադրբեջանի համար: Գուցե ա՞յն, որ հայ ժողովուրդը չի անաբեկում կենտրոնական իշխանություններին ԽՍՀՄ-ից դուրս գալու պահանջներով և հակախորհրդային լոզունգներով ու շրջափակումով: Կամ գուցե ա՞յն, որ հայ ժողովուրդը պատմության բերումով իր բախտը մշտապես կապել է ռուս ժողովրդի հետ:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի այս որոշումը լրիվ ոչնչացրեց ժողովրդի՝ առանց այն էլ արմատապես խարարված հավատը կենտրոնական իշխանությունների և արդարության նկատմամբ:

Ինչպիսի հույսեր ուներ հայ ժողովուրդը և ինչպես դաժանաբար խաբեցին նրան: Խաբեցին, բայց քող չկարծեն, թե պատմության քոռիքառով անցած և բազմաթիվ արհավիրքներից վերածնված հայ ժողովրդին կարելի է անաբեկել նացիոնալիզմի և ծայրահեղականության խրտվիլակով, ծնկի բերել նրան, ստիպել հրաժարվելու արցախյան համազգային շարժումից: Դա չի հաջողվի: Հայ ժողովուրդն արդեն դառը փորձ ունի:

Մի բանում մենք համոզված ենք, որ ոչ միայն հայ ժողովուրդը, այլև աշխարհի բոլոր ազատասեր ու արդարամիտ մարդիկ չեն հաշտվի ազգային ինքնորոշման իրավունքի խայտառակ ոտնահարման այս փաստի հետ և մինչև վերջ կպայքարեն արդարության համար:

Սոս ՄՈՎՍԻՍՅԱՆ